ՓՈՄԱՆԼՈՒԹԵՐՈՒՐԴ—ՏԱՐԻ—ԹԻՒ—2348 ՀԻՆԳՇԱԲԹԻ—7—ՅՈՒՆԻՍ—Ն. Տ.—13—ՅՈՒՆԻՍ—1879

ԳԱՅՄԱՆԴ

Տարեկան գին Կ. Պոլսոյ համար 10 Մէճ.
» » Գաւառաց » 2 Լիրա
Վեցամս. » Կ. Պոլսոյ » 5 Մէճ.
» » Գաւառաց » 1 Լիրա
Օտար երկիրներու » 50 Ֆր.
Յանուցման տողը մէկ անգամի համար 3 ղուրուշ, երկու անգամի համար 2 ղրշ է. աւելի անգամներու համար զատ սակարկութիւն կըլլայ։
Իւրաքանչիւր թիւ 40 փարա արժ։

ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ԳԱՅՄԱՆԴ

Դուրս գնացած լրագրաց ճանրու ծախքը Խմբագրութեան վրայ է։
Լրագրոյս վերաբերեալ անակամ որ և իցէ գրութիւն խմբագիր—Ցնորէնին տիար ուղղուի։ Վարագիա Սանասարեանց Ճատաէսի թիւ 198, Նօրօ խան։ Մասիսի գրասենեակը։
Ճանրու ծախքը չվճարուած նամակ չընդունուիր։
Զատրուած նամակ, յօդուած, եւ ետ չեն տրուիր։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 7 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Հելլենական կառավարութիւնն իւր պատուիրակները կարգեց սահմանաց ուղղութեան խնդրոյն վրայ Կ. Պոլսոյ մէջ բանակցելու համար, և արդէն Գաղղիա ծանոյց իրեն թէ Պերլինի վեհաժողովին 13րդ ատենադրութիւնը բանակցութեանց հիմ պիտի բռնէ։ Թայմզ լրագիրը կառաջարկէ որ Եանեայի տեղ փոխարինութիւն մը տրուի Բ. Դրան. դուցէ դըրամական փոխարինութիւն մ'ըսել կուզէ. սակայն Օսմանեան կառավարութիւնն այսպիսի նուաստացուցիչ պայման մը չկրնար ընդունիլ, քանզի ասոր նշանակութիւնն ուրիշ բան չէ՝ բայց եթէ ըսել կալուածատիրոջ մը. դուք դրամի պէտք ունիք, ձեր դըրացին ձեր կալուածին մէկ փոքրիկ մասը կուզէ, ուրեմն դրամ առէք և տուէք։ Բայց կալուածին մէջ բաժին ունեցողներ կան նաև որք հոն կը բնակին, և Ալպանիացւոց պատուիրակները բոլոր Եւրոպա շրջագայելէ և տէրութեանց յիշատակագիր մը ներկայացնելով Ալպանիական ազգութեան իրաւունքը պաշտպանելէ ետև մայրաքաղաքս եկան, ուր կ'ըսպասեն բանակցութեանց ժամանակ դարձեալ իրենց պահանջումը դէսպանաց ներկայացնելու։ Բայց Եւրոպական լրագրաց խօսքին նայելով, Ալպանիոյ պատուիրակները շատ տեղեր ընդունելութիւն գտած չեն երևիր, և Պերլինի կէս պաշտօնական թերթ մը կը ծանուցանէ թէ Արևելեան Ռումելիի պատուիրակները պաշտօնապէս չընդունուեցան յիշեալ մայրաքաղաքին մէջ, ինչպէս նաև չէին ընդունուած Ալպանիոյ պատուիրակները։ Կըսուէր թէ այս վերջիններն Իտալիոյ մէջ ջերմ ընդունելութիւն գտած էին. սակայն նախկին նախարար Պ. Բրիսբիի կազմած Հելլենասիրաց մասնախումբին՝ նախարարաց դլուխ Պ. Տէբրէթիսի հետ տեսակցելուն առթիւ՝ նախարարը պատասխանեց թէ կառավարութիւնը մասնախորհրդին համակարծիք է և իւր բոլոր ջանքը պիտի ընէ Պերլինի դաշնադրին 24րդ յօդուածին գործադրութեան, և Յունաստանի ծանուցեալ իրաւանց հաստատութեան համար։ Պ. Տէբրէթիս յարեց թէ Հելլենական մամլոյն Իտալիոյ նախարարաց դէմ ըրած ամբաստանութիւններն անտեղի էին և թերի տեղեկութեանց արդիւնք։ Նախարարն հարկ չդատեց իւր կարծիքն յայտնել ամբողջապէս, և անպատեհ համարեց առայժմ Հելլենական խնդրոյն վրայ խորհրդարանին մէջ վիճաբանութիւն բանալ։ Ինչպէս յայտնի է, 24րդ յօդուածը կը արամադրէ որ եթէ Յունաստան և Բ. Դուռը 13րդ ատենադրութեան համեմատ սահմանաց ուղղութեան վրայ չկարենան համաձայնիլ, վեց մեծ տէրութիւնք պիտի միջնորդեն բանակցութիւնները դիւրացնելու նպատակաւ, և Պ. Տէբրէթիսի խօսքէն կրնայ հասկցուիլ թէ Իտալիա ևս վեհաժողովին 13րդ ատենադրութիւնը բանակցութեանց հիմ կը ճանչէ։

Բայց Ալպանիացիք պիտի խոնարհի՞ն տէրութեանց միաձայն հաւանութեան առջև. իրենց յիշատակագրին մէջ կ'ըսէին թէ Յունաստանի պահանջումը մերժելու համար ամէն ճիգ պիտի թափեն, և թէ Ալպանիոյ հողէն մատ մը տեղ չտալու համար իրենց կեանքը պիտի զոհեն. Դժբաղդաբար մեր օրով շատ տեսանք այսպիսի յայտարարութիւնք որք ապարդիւն մնացին։ Ժիւլ-Ֆավրի "Մեր հողէն մատ մը տեղ, մեր բերդերէն քար մը չենք տար" խօսքը դեռ մոռցուած չէ։ Երբ զօրութիւնը կը խօսի, իրաւունքը կը լռէ։ Յունաստան հզօր չէ, բայց զօրաւոր պաշտպաններ ունի, և այս վայրկենիս Գաղղիոյ, Անգղիոյ և Ռուսիոյ պատերազմական նաւերը Պիրէոնի և Փաղերայի պատմական ջուրերուն վրայ կեցած են և Հելլենական ծովեզերքը կը պաշտպանեն։ Այսու ամենայնիւ դաշնադիրն և վեհաժողովին ատենադրութիւնները բռնական միջոց չեն տրամադրեր, և չկրնար դուշակուիլ որ եթէ համաշխարհական միջնորդութիւնն ի դերև ելնէ, ի՞նչ պիտի լինի։

* *

Գարատաղի սահմանաց խնդիրն ևս կատարելապէս լուծուած չէ տակաւին։ Անցեալներն Եւրոպական լրագիրք կը ծանուցանէին թէ երբ միջազգային յանձնախումբը Գարատաղի սահմանները կը դծէր, վրան հրազէն պարպուեր է Ալպանիացւոց կողմէն և թէ Օսմանեան պատուիրակները դժուարութիւն կը հանեն։ Շքօտրայի կուսակալ և զինուորական հրամանատար Հիւսէյին փաշան մասնաւոր հեռագրաւ սուտ հաներ այս դրոյցը, բայց ահաւասիկ Ռուսիա շրջաբերական մը կը դրկէ տէրութեանց՝ խնդրելով որ Գարատաղի սահմանաց ուղղութիւնը լրանայ, և պահանջելով որ վերոյիշեալ Հիւսէյին փաշան պաշտօնանկ լինի։ Տէրութեանց պատասխանը դեռ յայտնի չէ. բայց Ռուսիոյ այս նոր շրջաբերականն՝ իւր Թուրքիոյ հետ բարեկամութեան և դաշնակցութեան գաղափարներուն գործադրութեան մէկ զարմանալի նշանը կրնայ համարուիլ։ Հաղիւ թէ Թուրքօ-Ռուսական դաշնակցութեան մէկ ստուերը քանի մը երևակայութիւնք կ'երազեն, իրողութիւն մը կուգայ դայն անմիջապէս կը ցրէ։

* *

Լոնտրայի Էկզամինը լրագրոյն Վիէննայէն առած տեղեկութեանցը նայելով, Ֆիօրէնցայի մէջ Հերսէքցի հռչակաւոր ապոստամբապետ Լիուպօպրաթիչի և Կ. Պոլսոյ Ռուսական նախորդ դեսպան Ինկնաթիէֆ զօրավարին միջև մեծագոյն տեսակցութիւն մը տեղի ունեցեր է։ Ինկնաթիէֆ զօրավարն իւր վերադարձէն ստացած հրամանին համեմատ. Լիուպօպրաթիչի պաշտօն յանձներ է եղեր Աւստրիայեցոց դէմ յուզում մը դրդռել Նովի-Պազարի դաշտին մէջ և Ալպանիական ժողովուրդն յիշեալ դաշտը դրաւող տէրութեան դէմ զինեալ ընդդիմութեան մը քաջալերել։

Ասոր վրայ Լիուպօպրաթիչ Հռոմ դնացեր է՝ Իտալիայէն դուրս մնացած Իտալական դաշտաց Իտալիոյ հետ միացումը պահանջող մասնախումբին հետ խորհրդակցելու նպատակով։

ՏՐԱՄԱԽՕՍՈՒԹԻՒՆ

Կարևորութիւն Լսարանաց. — Կրթասիրաց ընկերութիւն յիսկիւտար. — Գայթակղութիւն դէպք մը. — Անցեալ շաբթուան զոհագործութիւնք։

—

Մեթէ մի միայն ապադայ սերունդոցն զբաղելով բոլորովին բարձի թողի՞ ընելու եմք ներկայ սերունդը։ Խնդիր մ'է այս՝ որ կարծեմ դեռ ուշադրութեան չառնուեցաւ մեր մէջ։ Մեր վերջին շարժումները միակ նպատակ ունեցան դաստիարակութիւն տալ Հայաստանի մանկտիոյն. նպատակ գովելի, այլ ոչ միակ բաւական, զի մինչև որ սերունդ մը չափահաս ըլլայ, ո՛ գիտէ ո՞րչափ կերպարանափոխութիւնք կրեն մեր Արևելք։

Ընկերութիւն մը պէտք է՝ ներկայ սերունդը լուսաւորելու համար Հայաստանի այլ և այլ կողմերը լրատաններ հաստատելու. ընկերութիւն մը պանդխտութեան առաջքն առնելու համար, ընկերութիւն մը Հայաստանի մէջ գաղթականութիւնք հաստատելու համար. ընկերութիւն մը դրամատեարց՝ Հայ գիւղացին ֆէլէյտէ ըսուած ժանտախտներուն ձեռքէն ազատելու համար. ընկերութիւն մը՝ Հայ գիւղացւոյ մի քանի օգտակար և անհրաժեշտ գիտելիք և արհեստք ուսուցանելու համար, որպէս զի կարող ըլլան նիւթական պիտոյքնին քիչ շատ հայթայթել։ Այս կարգէն են մշակութիւն բամպակի, զի զգեստուց մասին ամենէն խեղճն է Հայ գիւղացին, մշակութիւն դեղանխնձորոյ, անասնագարմանութիւն, մանաւանդ ընտանի կենդանեաց բազմանալուն և լաւանալուն միջոցները, կոշկակարութիւն և այլն։ Այս և այսպիսի բազմատեսակ Ա ՈՂԲ ԴԷ ԳԵՈՔ՝ ինչպէս եղաւ յարդ՝ ընկերութիւններ պէտք են Հայաստանի աւերը մոխրոյ տակ ընկճեալ ու նուաճեալ Հայը քիչ քիչ զարթուցանելու և նիւթապէս և բարոյապէս 'ի կեանս վերակոչելու համար։

* *

Լսարանաց օգուտներն երկարօրէն բացատրելու կարծեմք հարկ չը կայ։ Ասոնք չափահասից համար տեսակ մը դպրոց ըլլալով՝ ո՛չ միայն Հայաստանի շատ մը խորշերը պէտք է հասնին, ուր ամենագէտ քարոզիչներու երբեմնական քարոզներ դատ ուրիշ բան լսած չունին խեղճերն, և կարծես աշխարհէս և դարէս դուրս կապրին, այլ նոյն իսկ Պոլսոյ նման հայաբնակ կեդրոնի մը մէջ շատ պէտք են և մեծամեծ օգուտներ կրնան մատակարարել, եթէ մանաւանդ ժողովրդեան կարևոր, օգտակար և հետաքրքրական նիւթերու վրայ ըլլան բանախօսութիւնք և ոչ թէ վերացական ամուլ ճառատանց և կամ դպրոցական վարժերու հանդիսավայր դառնան։ Ցայտնի է արդէն թէ այս մասին Օրթաքիւղ բարձր 'ի գլուխ կը պարծի։ Իսկիւտարի երիտասարդութիւնն ալ՝ թէ և քիչ մը ուշ՝ փափաքեցաւ այսպիսի հաստատութեան մը դոյութիւն իւր թաղին մէջ ալ տեսնել և կազմուեցաւ Կրթասիրաց անուն ընկերութիւն մը մի քանի եռանդուն պատանիներէ կազմեալ, որ առաջին անգամ այսպիսի ձեռնարկի մը դէմ եղած դժուարութիւններէն չվրդովելով յաջողեցաւ՝ ինչպէս դիտէք՝ մի քանի երեկոյթներ տալ անցեալներն։ Ընկերութիւնը մտադիր է նաև ընթերցարան և թանգարան մը հաստատել իւր սրահին մէջ, ուր իսկիւտարու ընթերցասէր հասարակութիւնը պիտի կրնայ ամէն տեսակ օգտակար գրքեր, հանդէսներ և լրագրեր գտնել և կարդալ։ Ժողովրդեան լուսամիտ մասին պարտքն է այսպիսի ձեռնարկի մը յաջողութեանն ըստ կարելւոյն օժանդակել։

Կը տեսնուի ուրեմն որ Իսկիւտարու երիտասարդութիւնը թմրած կամ մեռած չէ, ինչպէս կը կարծէր ձրիաբար ձեր անցեալ աւուր նամակագիր պարոնը։ Եթէ, ինչպէս կըսեն, Հայաստանի մէջ ուսմունք տարածելու համար նոր ընկերութիւն մ'ալ նա հիմնած չէ, պատճառն ուրիշ

վաւ, որպէս զի 'ի Հարկէն նիւթական օգնութիւն մը ձեռք բերէ Ալպանիացւոց համար :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Լոնտրա 18 յունիս.

Տէյլի Թէլէկրաֆ լրագիրն իւր այս աւուր թուոյն մէջ կը հաստատէ թէ Անգղիա Թուրքօ–Հելլենական սահմանագըլխոց ուղղութեան համար առաջարկեալ հաւաքական միջնորդութեան մասնակցելէ առաջ պիտի պնդէ որպէս զի Ցանսատանի թղթակիցք դաւառաց մէջ Մահմետականաց և Քրիստոնէից կրօնական հաւասարութիւն հաստատուի :

Լոնտրա 18 յունիս.

Մեծ տէրութիւնք Դանուբի մէջ Պուլղար նաւախումբ մը կենալու պատահականութեան կը հակառակին :

Լոնտրա 18 յունիս.

Անգղիացի Թրօթթըր հաշտարարեալը Փոքր Ասիոյ մէջ Բրիտանիոյ գաւառին համար Անգղիական հիւպատոս անուանեցաւ և Կարին պիտի նստի.

Այս առաւօտ հասած հեռագիրք

Փարիզ 17 յունիս.

Ռէբիւպլիք Ֆրանսէզ սուտ կը հանէ Թայմզի այն լուրը թէ Գաղղիա որամադիր է Հելլենական խնդրոյն նկատմամբ իրաւախոհութիւն մ'ընդունիլ սա հիման վրայ, որ Եանեա Թուրքիոյ մնալով, Բ. Դուռը Պէրլինի դաշնագրութեան նախատեսածէն աւելի ընդարձակ երկիր տայ Յունաստանի :

Ցիչեալ լրագիրը կըսէ թէ՝ ընդհակառակն Պ. Վատինկթօն պաշտօն յանձնած է Պ. Ֆուրնիէի որ Պէրլինի դաշնագրութեան որոշմանց ամբողջապէս գործադրութիւնը պահանջէ և մասնաւորապէս Եանեայի նկատմամբ դաշնագրութեան գործադրութիւնը պնդէ դեսպանաց քով :

Փարիզ 17 յունիս.

Ծերակուտի և երեսփոխանաց ժողովները իրենց նիստը դադրեցուցին մինչև յառաջիկայ շաբաթ օր :

Ճէզայիր 17 յունիս.

Կոստանդինի գաւառին Արաբ ապըստամբներն հնազանդութիւն առաջարկեցին :

Վիէննա 17 յունիս.

Անտրաշի կոմսն՝ որ թոքացաւէ (սաթլըճան) հիւանդացած էր, լաւագոյն վիճակի մէջ է :

Լոնտրա 18 յունիս.

Մանշի նաւախումբն, որ Միջերկրական ծովուն մէջ կը գտնուի, Անգղիա վերադառնալու հրաման առաւ :

Փարիզ 18 յունիս.

Ծերակուտի և երեսփոխանական ժողովները վաղը համախորհուրդ ժողով պիտի կազմեն՝ ժողովոց Փարիզ վերադառնալու առաջարկութեան վրայ եղած քըննարկութեան պատճառաւ սահմանադրութիւնը վերաքննելու :

Ճէզայիր 18 յունիս.

Ապստամբեալ Շէրիֆն և իւր կուսակիցները փախան, բայց ո՛ր կողմ երթալնին յայտնի չէ :

Լոնտրա 18 յունիս.

Օսմ. Բոնս.		12
փոխ.	1865	15 1/2
»	1869	14 1/2
»	1871	51 1/2
»	1872	21 1/2
»	1873	13 1/2
»	Եգիպտ.	69
Անգղ. Բոնս		97 1/4

Փարիզ 18 յունիս.

Օսմ. Բոնս.				12,12 1/2
Գաղղ. Բոնս.		3 0/0		82,47 1/2
»	»	»	Նոր	85,40
»	»	5 0/0		116,85

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝

Կ. Պոլսոյ քաղաքապետութեան փոխանորդ Մէհմէտ փաշան Կ. Պոլսոյ քաղաքապետ անուանեցաւ.

Զէյթունի նորընտիր գայմագամ Հիւսնի էֆէնտին, որ Հալէպի երեւելիներէն է, երկրորդ կարգի պաշտօնատարութեան աստիճան տըրւեցաւ :

Վագըթ լրագիրը նախկին Մեծ-Եպարքոս Մահմուտ Նէտիմ փաշային Կ. Պոլիս կոչուելուն լուրը բոլորովին սուտ կը հանէ : Իսկ Մաթէն լրագիրը կըսէ թէ կոչելու հրամանն ետ առնուեր է :

Մաթէն լրագիրը Պուքրէշէն եկած մամնաւոր հեռագրէ մ'առնելով իւր երէկուան թուոյն մէջ կը ծանուցանէ թէ Ռումանիոյ կարոլոս իշխանն 'ի մօտոյ Կ. Պոլիս գալու կը պատրաստուի եղեր :

Իսկ Վագըթ իւր այս աւուր թըւով սուտ կը հանէ այս լուրն՝ յայտարարելով թէ Կ. Պոլիս եկողը մայրաքաղաքիս Ռումէնական դեսպան Պ. Պրաթիանօ է :

Կիպրոսի նորընտիր կառավարիչ Պիտըլֆ գնդապետն երէկ յատուկ շոգենաւով իւր պաշտօնատեղին գընաց մայրաքաղաքէս :

Մայրաքաղաքիս Անգղիական դեսպան Սըր Հ. Լէյարտ երէկ Պէպէք երթալով Պարսկական դեսպան Մօհսին խանին հետ երկար տեսակցութիւն մ'ունեցաւ :

Երեքշաբթի օրը՝ մայրաքաղաքիս հացագործներն, որք գաղթականաց և մայրաքաղաքիս ուտիչ աղքատաց ձրի հաց կուտան քաղաքապետութեան ընկալագրերուն փոխարէն, և ապրիլ 11 էն մինչև մայիս 31 դրամ չէին առած, Բ. Դրան երթալով՝ Մեծ-Եպարքոսին աղերսագիր մը տըւին և իրենց հաշիւներուն վճարումը խնդրեցին, յայտարարելով որ եթէ իրենց առնելիքը չվճարուի, աղքատաց ձրի հաց տալու անկարող պիտի լինին :

Ատաբազարէն եկած վերջին տեղեկութիւնք կը ծանուցանեն թէ Չէրքէզաց չարագործութիւններն անարգել կը շարունակեն : Հետևեալ դէպքերն անցեալ շաբթու տեղի ունեցած են :

Ատաբազարէն 3—4 ժամ հեռի Ֆընտըգլը անուն գիւղէն Ատաբազար եկող Յոյն մը ճանբան սպաննըւեր է Չէրքէզներէն :

Ատաբազարէն 2—3 ժամ հեռի գտնուող Չաթալ—Քէօբրիւ ըսուած տեղը 20 ճանբորդ կողոպտուեր են Չէրքէզներէն :

Նիկոմիդիոյ ճանբուն վրայ գտնուող Արոլան պէյ գիւղի բնակիչներէն էքմէքճի Պօղոսեան Գրիգոր անուն հայազգի մը Արմաշէն դարձած ժամանակ զարնուեր է :

Չէրքէզք Մըլապիճէն Նիկոմիդիա գնացող Յոյն մը կողոպտելով գոհ չեն եղեր և ականջներն ու ձեռքերը կտրեր և ուրիշ քանի մը տեղերէն ալ վիրաւորեր են :

Երբոր մայրաքաղաքէս քանի մը ժամ հեռու գաւառի մը մէջ աւազակութիւնն այսպէս ազատ ասպարէզ կը գտնէ, հեռաւոր գաւառաց և մանաւանդ Հայաստանի մէջ գործուած ոճրագործութեանց վրայ պէտք չէ զարմանալ :

Կարինէն գրուած նամակներ կը ծանուցանեն թէ այս տարի անձրևներն յարմար ժամանակին և առատ եկած լինելով, հնձոց առատութիւն կը յուսացուի եղեր : Կարսէն բազմաթիւ Թուրք գաղթականք կը շարունակին գալ 'ի Կարին : Տէրվիշ փաշան 'ի մօտոյ Տէրսիմի Քիւրտերը պատժելու պիտի երթայ եղեր :

Երեքշաբթի օրն 33 միլիոն 290 հազար ղրուշի թղթադրամ այրեցաւ Պայազիտի հրապարակին վրայ :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼԻՍ

ԽՈՀԱՄԸ ՈՒՄՈՒՄԻՔ

Երէկ իրիկուն գոցուեցաւ		13, 2
Այս առաւօտ բացուեցաւ		13, 2
կէս օրին		13, 2
Ռումէլիի երկաթուղի	ֆր.	48,50
Թղթադրամ	մր.	1130

ԸՆԹԱՑՔ ԱՐԺԵԹՂԹՈՑ

6 Յունիս

Սօսիէթէ Ժէնէրալի բաժ.	Անգ. լր. է.	
» փոխառութեան	»	3,20
Կ. Պոլսոյ Պանքային	»	6,15
Քրէտի Ժէնէրալ	»	4,15
փոխ. 1863	Ֆր.	77.
Թրամուայ	Օսմ. լր.	2 70

ԸՆԹԱՑՔ ԴՐԱՄՈՑ

7 Յունիս

Անգղ. լիրա	ղրշ.	109 12
Նաբօլէոն ոսկի	»	87 16
Իմբէրիալ Ռուս	»	90
Դըրոմից	»	31 15
Մէճիտիէի տարբերութիւն	»	5 32
Չինգոց »	»	14 10
Պլինձ	»	178

ԱԶԴԱՅԻՆ,

Ամեն. Ս. Պատրիարք Հայրն իւրեն եղած յատուկ հրաւիրանաց վրայ՝ երէկ Բարձր. Մեծ-Եպարքոսին այցելութեան երթալով՝ սիրալիր պատուով ընդունուեցաւ, և մէկ ժամու չափ տեսակցեցաւ Ն. Բարձրութեան հետ :

Պատրիարքական փոխանորդ Գեր. Իզմիրլեան սրբազանի նախագահութեամբ երէկ խառն ժողով գումարելով՝ հետևեալ որոշումներն ըրաւ :

1. Երզնկայի առաջնորդական ընտրութեան տեղեկագիրը վաւերացընելով՝ տեղւոյն նորընտիր առաջնորդ Այազմալեան Գեր. Համբակ վարդապետին եպիսկոպոսական վկայագիր տալ որոշեց :

2. Խումբիւկճեան Մովսէս վարդապետ Շապին-Գարահիսարի, Նէրկարարեան Պետրոս վարդապետ Բաբերդի և Տիգրանեան Հրաշագործ Մըկըրտիչ եպիսկոպոս ալ Դերջանի առաջնորդական տեղապահ կարգեց :

3. Վանօրէից խորհրդոյ առաջարկութեան վրայ որոշեց հեռագրել Երուսաղէմայ Ս. Պատրիարքին թէ Ազգային վարչութիւնը խորին ուշադրութեան առած է Երուսաղէմայ պարտուց խնդիրն, և թէ պիտի փութայ զարժանն անյապաղ ի գործ դնել :

Զինուորական գործոց պաշտօնա-

բան չէ, բայց եթէ սա թէ՝ Իւսկիւտարցին այն անտեղի կարծիքէն չէ թէ Հայաստանի մէջ բան մը գործած ըլլալու համար անպատճառ հազարաւոր նոր ընկերութիւններ պէտք է հիմնել, ամենքն ալ տկար, այլ արդէն եղածները բաւական համարելով՝ զանոնք զօրացնելու և նոցա աջակցելու պէտք է աշխատիլ : Զեր նամակագիրը կրնայ՝ եթէ կը փափաքի՝ Արարատեան և Արևելեան-Դպրոցասիրաց ընդ-ամենուն ցանկն աչքէ անցունել. մեք քաջայոյս եմք որ բազմաթիւ Իւսկիւտարցի երիտասարդաց անուանքը պիտի տեսնէ հոն :

* * *

Մեր կողմի վերջապաւորք դարձեալ սկսած են մերթ խօսակցութեան նիւթ մատակարարել իրենց վրայ : Այս միջոցիս իսկ՝ բոլոր Սէլամիէցին գայթակղական դէպքի մը վրայ կը խօսի, որ շատերու զարմանք, ոմանց զայրոյթ և ինձ ամենևին անտարբերութիւն կը պատճառէ : Դէպքն ըստ ինքեան երիտասարդական է, բայց ոչ հեղինակը, որ ալիտակահեր և ալիտականուն անձ մ'է : Գեր. Ճերմակեան, վասն զի հարկ է վերջապէս անունը տալ, առ այժմ հրաժարած և մեկնած է թաղէս : Մենք այս անձին դէմ որ և է հակակրութիւն կամ ատելութիւն չունենալնուս, կարծեմք կըրնամք իւր մեր մէջ անցուցած կարճ ընթացքին վրայ մէկ երկու խօսք ընել անաչառութեամբ : Ի սկզբան մեծ համբաւ տարածուած էր իւր վրայ, իւր լեզուագիտութեան և ուսումնականութեան վրայ : Մենք ըսկեպտիկեան էինք այս մասին, վասն զի իրաւ է որ կրնար լեզուագէտ և ուսումնական ըլլալ, բայց այդ համբաւին համեմատ արդիւնք մը տեսած կամ լսած չունէինք իրմէ : Շատերու հետաքրքիր եղայ հարցնելու թէ Հայր սուրբն ունի՞ 'ի Վենետիկ կամ այլուր տպած երկասիրութիւններ եւ, չկրցի բան մը իմանալ. Ինչ և իցէ, իւր քարոզներն, յորոց ազգային նիւթոց վրայ խօսքեր բացարձակ կերպիւ արտաքսուած էին, անցեալ և նախորդ տարու Գաղղիացի քարոզչաց բեմբասացութիւններուն վրայ ձևուած բաւական կանոնաւոր և արհեստին պահանջմանց համեմատ պատրաստուած էին, և կրնային քիչ շատ հաճելի ըլլալ ժողովրդեան՝ եթէ դարուս ոգւոյն հակառակ շատ անգամ միջնադարեան գաղափարներով և անտեղի վարդապետութեամբք տոգորեալ չըլլային : Օրինակի համար, անցեալները մեր Հայր սուրբը բնաբան դրած էր իւրեն «վա՜յ ձեզ մեծատանցդ» խօսքը և ժամերով որոտաց հարուստներու և հարստութեան դէմ, զորս երկնից արքայութեան անարժան հռչակեց : Կը հասկնամ թէ Պօսիւէ մը Լուդովիկոս ԺԴ-ի մը և կամ ժամանակին պալատականաց կամ աւագորերոյն առջև՝ անոնց ամբարտաւանութիւնն ընկճելու և ապաշաւել տալու համար այս տեսակ ատենախօսութիւն մ'ընէ. բայց մեզ նման խեղճ և ամենաղքատ ազգի մը մէջ, ուր հազիւ հարուստ ըսուելու արժանի մի երկու անձինք կրնան գտնուիլ, ենել հարստութիւնը պարսաւել, հարուստները դժոխոց որդի անուանել, ի՞նչ յիմարութիւն, տէ՛ր Աստուած : Հայր Ճերմակեանի դրեթէ բոլոր քարոզներն այս սկզբան վրայ հիմնեալ էին, որ իւր առած դաստիարակութեան տիպը կը կրեն, թէ այս աշխարհիս մէջ հանդըստութիւն և անդին ալ երջանկութիւն չկրնար ըլլալ եղեր, անկարելի է եղեր. բնաւ հանգստութեան, դիւրակեցութեան, փառքի, հարստութեան ցանկալու չենք եղեր, վասն զի ատոնք ունեցողն հանդերձեալէն կը զրկուի եղեր, և այլ ասոնց նման բաներ, թէ և ինքը գործով առաջին օրէն սաստիկ փառասիրութեան օրինակ տուողն եղած և մի քանի օրուան մէջ դաւաղանակրութիւն և յետոյ ծայրագունութիւն ձեռք բերած էր, և վերջերս ալ եպիսկոպոսանալու փափաք կը տածէ եղեր : Ահա Եւրոպական կրթութիւն առած անձի մը քարոզած վարդապետու-

տան արտաքին թղթակցութեան դիւանին անդամներէն Յովհաննէս Էֆֆենտի Գարրիէլեան, որ բաւական ժամանակէ հետէ անկողնոյ կը ծառայէր, աւջի օրը կնքեց իւր մահկանացուն, և երէկ յուղարկաւորութեան հանդէսը կատարուեցաւ։ Հանգուցեալը 45 տարեկան էր, Անդրիական լեզուին մէջ քաջահմուտ ըլլալով, թարգմանչութեան պաշտօն վարած է շատ ժամանակ թընդանօթարանի և ապարատներուն պաշտօնատանց մէջ։ Իւր քաղցր ու համբոյր բնաւորութեամբը շատերուն սիրելի ու յարգելի եղած էր։ Մեր վաղածանօթ բարեկամն ըլլալով ցաւեցանք իւր տարաժամ դժբաղդ մահուան վրայ։ Փոնջ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆԸ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

Տրապիզոն 31 մայիս 1879

Խմբագիր Տէր·

Վիէննայի «Ապէնտ Բօսթ» լրագրոյն յօդուածը, զոր ձեր պատուական լրագրոյն միջոցաւ հրատարակելու բարեհաճեցաք, ընդհանրապէս շատ ճիշդ տեղեկութիւններ կը պարունակէ մեր վրայ։ Սակայն թերութիւններէ ալ զերծ չէ· մերթ այնպիսի պակասութիւններ վերագրած է մեզ, որք բնաւ այն աստիճանի չեն, մերթ ալ յատկութիւններ կամ գովեսաներ տուած է, որոց արժանի ըլլալնիս տարակուսելի կը թուի ինձ։ Օրինակի համար, պատուելի Ֆրանց Լիսէր կըսէ թէ Հայք իրենց ուսումնական հաստատութեանց ցոյներէն աւելի կօդնեն, թէ ուր որ ալ մը Հայ հաւաքուի, եկեղեցի ու դպրոց կը հաստատեն և լրագիր բերել կը տան։

Թողլով այժմ միւս կէտերը, տեսնենք թէ ճշմարիտ են Գերմանացի հեղինակին ըսածները լրագիր բերել տալու մասին։ Դուք ինձմէ լաւ գիտէք թէ տակաւին ի՞նչ աննախանձելի վիճակի մէջ է մեր լրագրութիւնն՝ հակառակ այն ամեն զոհողութեանց՝ զոր լրագրապետք ընելու վրայ են շարունակ· տակաւին Հայաստանի շատ քաղաքներ լրագրի երես տեսած չեն և շատերն ալ շատ քիչ տեսած են։

Ես չեմ կրնար ամեն քաղաքի վրայ ալ դատողութիւն ընել, սակայն ամենայն համարձակութեամբ և իրաւամբ կրնամ ըսել թէ Տրապիզոնցիք ընդհանրապէս տակաւին վարժուած չեն լրագիր կարդալու կամ մանաւանդ լրագրի սակ տալու։ Որպէս զի ըսածներս անորոշ խօսքեր չերևան, հարկ կը համարիմ հոմրել ատ Տրապիզոն եկող Հայ լրագիրներն, որք են՝ 3 օրինակ Արևելեան Մամուլ, 3 Թէրճէմանը Էֆքեար, 4 Հայրենիք, 3 Մասիս, 2 Փունջ, 2 Աւետարեր, 1 Մանղումէ, 1 Լրագիր։ Պէտք է դիտնալ նաև թէ այդ լրագիրներէն գրեթէ կէսը կա՛մ վարժարանաց և կամ հասարակաց պաշտօնեայներու կը դան, ուրեմն 2000էն աւելի չափահաս Տրապիզոնցւոց համար իրր 10 օրինակ լրագիր կը մնայ, այսինքն 200 մարդու մէկ լրագիր, մինչդեռ Յոյներն Հայերէն դոնէ 10 անգամ աւելի լրագիր կ'ստանան։ Փոքր ի չատէ ազգային անձնասիրութիւն ունեցող մէկը չկրնար չտխրիլ երբ ներկայ կը դտնուի Պոլսէն եկած թղթատարութեանց ցրուելուն· վասն զի հոն կը տեսնէ որ Յոյնք բազմաթիւ ծրարներով լրագրեր և հանդէսներ կընդունին, մինչդեռ հազիւ քանի մը Հայ լրագիրներ կը հանդիպին իւր աչքին։ Յուսահատութեան ոգին չէ որ կը դրդէ ինձ գրել այս տողերն, և ոչ իսկ պարաւելու համար, այլ որպէս զի մեր իրական վիճակին վրայ չխարուինք և պէտք եղած դարմանը տանինք դայն բարւոքելու համար։ Պոլիս եղած ատենս համոզուած էի թէ Յունաց ազգային զգացումը մերինէն շատ աւելի զօրաւոր է, թէ անոնք հաւատք ունին իրենց ապագային վրայ, և թէ մեծամեծ զոհողութիւններ կընեն նախ մտաւորապէս վերականգնելու համար, որուն անխուսափելի հետևութիւնն է և քաղաքական վերակենդանութիւնը։ Ատ Տրապիզոնի մէջ ալ չկրցայ փոխել վերոյիշեալ համոզումս։ Ուրեմն ինչպէս շատ մը բաներու՝ այնպէս ալ ընթերցասիրութեան մէջ Տրապիզոնի Յոյները Հայերէն առաջ են։ Իսկ Թուրքերը Հայերէն ալ յետադէմ են, իրենց Բիւշտիյէ կոչուած վարժարանը նախանձելի կացութեան մէջ է· իսկ թագային վարժարանաց վիճակն՝ ինչպէս հոգ՝ նոյնպէս և այստեղ ողբալի է։ Քաղաքս եկած Թուրք լրագիրներուն դրեթէ ամենն ալ կառավարութեան պաշտօնէից կը վերաբերին, և ընթերցարան մ'ալ չունին։ Գոնէ Հայերը կրնան չարաթն երկու անգամ լրագիր կարդալ Հակահասունեան Հայոց Սրճարան—Ընթերցարանին մէջ։

Ամսոյս 17ին Հակահասունեանց առաջնորդ Մարկոս վարդապետը Հասունեան եպիսկոպոսին դիմեց մեղայ դոչելու և ի ծոց Պապականութեան ընդունելու համար· եպիսկոպոսը դայն տեղւոյս Քարուչիններուն ուղարկեց իւր ապաշխարութիւնը անդ կատարելու համար։ Արդէն քանի մը շաբաթ յառաջ իւր այդ դիտաւորութիւնը յայտներ էր՝ իւր ամսականին (երեք լիրա) անբաւականութիւնը յայտնելով, սակայն հասարակութիւնը խնդրեր էր իրմէ որ գոնէ մինչև Պոլսէն ուրիշ վարդապետ մը գալն սպասէ։ Այս անգամ Մարկոս վարդապետ՝ թերևս վախնալով որ քանի ուշանայ այնչափ կը ծանրանայ իւր պատիժը, այլ ևս չուզեց սպասել և գնաց վերութեան դուռը բացելու։

Ըստ իս, Մարկոս վարդապետ Քիւրէլեան պատրիարքէն աւելի պատուաւոր դտնուեցաւ այս մասին, վասն զի գոնէ առաջուց իմացուց իւր որոշումը և անոր չարժասիթը, այսինքն ամսականը։ Առաջին անգամը չէ որ այս մարդը դատանութիւն և եկեղեցի կը փոխէ· կ'երևայ թէ իւր համոզումն է այն դատանութենէն բլալ ուր աւելի կը կշտանայ իւր փորը։ Գալով Տէպայի թղթակցին այն ակնարկութեան թէ «մարգարիտն արդէն սկսած է տալ իւր պտուղները, վասն զի Պոլսոյ և Տրապիզոնի Հակահասունեաններէն շատերը Հասունեանի կողմը դարձան», բոլորովին ճիշդ չէ, գոնէ Տրապիզոնի համար։

Հետաքրքիր եղայ այդ մասին և ըստոյգ աղբիւրներէ իմացայ թէ միայն մէկ ընտանեաց հայր դարձած է ատ ցայսօր, այն ալ թերևս ի սէր ընտանեկան խաղաղութեան։ Իսկ թէ բոլորովին ապատասիրութեան և ազգասիրութեան արդի՞ւնք է արդեօք այդ հաստատումը-տութիւնը, այդ ալ ուրիշ հարցում մ'է, որուն բոլորովին ստորատական պատասխան չեմ կարող տալ։ Կ'երևայ թէ շահն ու կիրքն ալ ունին իրենց մասը։ Կը տեսնէք, խմբագրապետ Տէր, մինչդեռ մէկ կողմէն մեր մահու և կենաց խնդիրը կը յուզուի և մենք ամեն ժամանակէ աւելի պարտական էինք ամեն կրօնական խորութիւն մուծանելով մի սիրտ և մի հոգի աշխատիլ մեր վերակենդանութեան իրր ամփոփ և մի ժողովուրդ, քանի մը կրօնականաց փաստամոլութիւնը կը բերէ մեր մէջ ալ մարդկութեան արատ բերող վարդապետութիւն մը իւր ամեն հետևանքներով, և արդէն անգոր ժողովուրդը աւելի ևս կը տկարացնէ։

Ամսոյս 27ին կիւրակէ օրը սատակ ամպրոպ ըլլալով քաղաքս՝ քանի մ'անգամ փայլատակեց և կայծակը Բիւշտիէ վարժարանին ծխնելոյզէն իջնելով պայթեցաւ, պատին մի քանի տեղերը փլցուց և հարկաւ բոլոր աշակերտներն ահարեկ ըրաւ, սակայն բարեբաղդաբար կենաց վնաս չհասաւ։ Եթէ արդեօք անմահն Ֆրանքլինի գիւտը պիտի ընդհանրանայ մեր երկրին մէջ ալ, որպէս զի վերծ ըլլանք այդպիսի վտանգներէ։ Թերևս կոպատէք որ այս նամակաւ Ձեզ նկարագրեմ Սահմանադրութեան տարեդարձի հանդէսը, սակայն տեղի չունեցաւ։

Ձեր ընթերցողներուն մէն

ԹԷՐՃԷՄԱՆԸ ԷՖՔԵԱՐԻ ՑԵՏՍ ԿՈՉՈՒՄԸ

Դարաքէօյի ծանօթ դէպքին վերայ Թէրճէմանը Էֆքեար լրագրին իւր երէկուան և առջի տուր թիւերուն մէջ ըրած յայտարարութիւնները վերջ կուտան այն ամուլ վիճաբանութեան, որուն իւր սխալ հրատարակութիւնք տեղի տուեր էին։ Մեր յարգոյ պաշտօնակիցն՝ հակառակ իւր անցեալ ուրբաթ տուր թուով ըրած հրատարակութեանց, որովք Հայ բեռնակիրներն յանցաւոր և անոնց դասն անիրաւ կը ցուցնէր, և Մասիսն ալ անիրաւ դատի մը պաշտպան կը համարէր, հասարակաց կարծեաց դժգոհութենէն և իրեն եղած յանդիմանութիւններէ ստիպեալ՝ իւր այս երեքշաբթի տուր թուով կը խոստովանի թէ յանցանքը Քիւրտերուն քով էր և մինչև իսկ կը հրաւիրէ Հ. Բ. Էֆֆենտին որ այդ վայրագները վնասէ իւր չէնքէն։ Խնդիրն՝ ինչպէս յայտնի է, ասով կը վերջանար, որովհետև մեր միակ նպատակը Թէրճէմանը Էֆքեարի սխալներն հերքել, Հայ բեռնակրաց անմեղութիւնն հաստատել և յանցանքին Քիւրտ գործաւորաց քով լինելն ապացուցանել էր։ Մեք այդ նպատակին հասանք, և գոհ եմք որ Թէրճէմանը Էֆքեարի խմբագրութիւնն ալ վերջապէս ճշմարտութեան առջև խոնարհելով, վէճին առիթ տուող նիւթը մէջ տեղէն կը բառնայ։

Բայց մեր յարգոյ պաշտօնակիցը դիւրահասկանալի զգացմամբ մը մեզ նորէն պատասխան գրելու հարկ կը տեսնէ։ և երէկ նոր յօդուած մը կը հրատարակէ։ Թէրճէմանը Էֆքեար չկրնար հանդուրժել որ Մասիս զինքը Քիւրտերուն պաշտպան հռչակած լինի, և ի նպաստ ազգային դատին ցարդ իւր ըրած հրատարակութիւնները կը յիշէ։ Ընթերցողք դիւրաւ կը հասկընան թէ ասոնք ինդրէն դուրս խօսքեր են։ Մեք Թէրճէմանը Էֆքեարի ընդհանուր ընթացքը չեմք քննադատած։ բայց հաստատած եմք և կը հաստատեմք թէ ներկայ պարագային մէջ արդարասիրութեան և ազգասիրութեան հակառակ վարուեցաւ՝ մինչև իւր յետոյ կոչումն ըրած օրը։ Հետևաբար, Թէրճէմանը Էֆքեարի մեզ դէմ ըրած գանգատներն անտեղի են, ըստ որում մեր պաշտպանած դատին արդարութիւնն ինք ալ կը ճանչէ այժմ։

Թէրճէմանը Էֆքեար իւր երէկուան թուոյն մէջ աւելի յառաջ երթալով, ո՛չ միայն Քիւրդերուն արտաքսումն, այլ եթէ հնար է՝ Յոյն Գալֆային ալ ճանբուիլը կը խնդրէ Հ. Բ. Էֆֆենտիէն, որովհետև՝ ինչպէս կը յիշեն ընթերցողք՝ Յոյն Գալֆան ալ յանցանք ունէր այս գործին մէջ։ Հարկ չկայ ըսելու թէ Թէրճէմանը Էֆքեարի այս դարձը գոհացուցիչ է· և թէպէտ իւր երէկուան յօդուածին մէջ քանի մը մանր մունր ակնարկութիւններ կան մեզ դէմ, որոց կրնան արժանաւոր պատասխաններ տրուիլ, և որոց ի՛նչ տեսակ զգայման արդիւնք լինիլը դիւրին է դուշակել, սակայն վէճին բուն նիւթ եղող խնդրոյն սպառած լինիլը տեսնելով, ներողամիտ կը լինիմք իրեն և գոհութեամբ կը փակեմք ներկայ վիճաբանութիւնը, ցայտյայտնելով միայն որ Թէրճէմանը Էֆքեար մեզ դէմ ըրած սխալ դիտողութեամբք առիթ տուած էր այդ վիճաբանութեան, որուն կրնար առաջքն առնուլ՝ գործն 'ի սկզբանէ լաւ ստուգելով և այս շաբթու գրածներն անցեալ ուրբաթ օրը գրելով։ Բայց վերջապէս լաւ է անագան՝ քան երբէք։

ԻԼԱՆ

Զաթալճա վէ Զօրլու վէ ճիվաբընտա պուլունան ասքերի Շահանէ իչուն շուրութը՝ մուգարրէրէսի վէճճ իլէ միւպայեա օլունաճադ լահմին իճրա իտիլէն միւնաքասասընտա պէհէր գըյէսի ալթը ղրշ օթուզ փարայա օլարադ, Թալիպի էօհտէսինտէ օլուպ հազիրանը բուսմինին եէտինճի բէնճէնպիհ կիւնիւ միւնաքասասը պիլ իճրա գարարը գաթիսի վերիլէճէյինտէն, իթասընա Թալիպ օլանլարը եէվմի մէգիւրտէ Տարի Շուրայի ասքերիյէ կէլմէլէրի։

5 հազիրան 1879

Պապը Սէրասքէրի

Նիզամիյէ Էրզաք անպարընա շէրայիթը մալիւմէ իլէ միւպայեա օլունաճադ պէշ պին գըյէտէն օն պին գըյէյէ գատար բէթիմօ սապունուն պէհէր գըյէսի տէօրթ ղրշա օլարադ Թալիպի էօհտէսինտէ օլուպ հազիրանը բուսմինին եէտինճի բէնճէնպիհ կիւնիւ միւնաքասասը պիլ իճրա գարարը գաթիսի վերիլէճէյինտէն, իթասընա Թալիպ օլանլարը եէվմի մէգիւրտէ Տարի Շուրայի ասքերիյէ կէլմէլէրի։

5 հազիրան 1879

Պապը Սէրասքէրի

տան արտաքին թղթակցութեան դիւանին անդամներէն Յովհաննէս Էֆֆենտի Գարրիէլեան, որ բաւական ժամանակէ հետէ անկողնոյ կը ծառայէր, աւջի օրը կնքեց իւր մահկանացուն, և երէկ յուղարկաւորութեան հանդէսը կատարուեցաւ։ Հանգուցեալը 45 տարեկան էր, Անդրիական լեզուին մէջ քաջահմուտ ըլլալով, թարգմանչութեան պաշտօն վարած է շատ ժամանակ թընդանօթարանի և ապարատներուն պաշտօնատանց մէջ։ Իւր քաղցր ու համբոյր բնաւորութեամբը շատերուն սիրելի ու յարգելի եղած էր։ Մեր վաղածանօթ բարեկամն ըլլալով ցաւեցանք իւր տարաժամ դժբաղդ մահուան վրայ։ Փոնջ

թիւնը։—Հայը շատ մտիկ ըրած է այդպիսի չարչարանաց և թշուառութեանց քարոզիչ բուեր· երթայ բարով։

* * *

Երբ սպիտակահեր անձ մ'իսկ կը դթէ ամենադժուարին ուխտի մը դէմ ի՞նչ ըսենք անոր որ այդպիսի ուխտապահանջութեան մ'եռանդը կը հասցընէ մինչև 18 ամեայ պատանիներ բռոյապէս բռնադատելով այդ սեղանին վրայ բերել զոհելու։ Յանցանքը դրութեա՞ն է թէ դրութիւնը դրածադրողներուն, չեմ դիտեր։ Սա ըստոյգ է որ անցեալ օր Եէնիմահալլէի եկեղեցւոյն մէջ երկնից ընծայուած խումբ մը երիտասարդաց մին հաղիւ 18 ամեայ պատանի մ'էր։ Սորա ձեռնադրութիւնը ժողովրդեան կանխաւ իմաց տրուած չէր, և իմացուեցաւ որ խեղճ պատանին շատ ջանայեր է իւր Սրբազանը համոզելու որ առ այժմ իւր ընծայումն ուշացնէ, զի դեռ ոչ իւր զոհին մեծութիւնը ճանչնալու և ոչ այդ կոչման համապատասխանելու վիճակի մէջ էր։ Հակառակ իւր պաղատանաց՝ Սրբազանն անդրդուելի մնացեր, և վերջապէս ընդ լծով խոնարհելու հարկադրեր է զայն։ Զենք դիտեր թէ անցեալ տարիներ կրօնական ժողովոյ կողմանէ հրատարակեալ կանոնադրութիւնն 'ի մասին ձեռնադրութեան կղերականաց ի՞նչ եղաւ։ Գործը սա է որ վերոյիշեալ ձեռնադրութեան ժամանակ շատեր իրաւամբ ցաւեցան այսպիսի մանկահասակ պատանիներ իրենց ծնողաց գըրկերէն յափշտակուելուն դէմ, և յաւարտման եկեղեցւոյն նշմարուեցաւ որ նորընծայն կարտասուէր սև վեղարին ներքևէն։ • • •

ՄԱՍԻՍ

Տրապիզոն, 1 Մայիս 1879

Ինչպէս գիտնաք, Մասիս լրագրոյն հրատարակութեան ամսական գինը 10 օրինակ լրագիր է։ Ուստի ինչպէս ամենայն ազգասէր անձ մը, մենք ևս ուզեցինք մեր ազգայնոց ծանօթացնել մեր լրագրին գոյութիւնը, ինչպէս նաև մեր ազգայնոց ուղղեցինք մեր ազգասիրական կոչը։ Ինչպէս գիտնաք, Տրապիզոնի Հայերն ալ 10 օրինակ լրագիր կ'ստանան։ Ինչպէս գիտնաք, Տրապիզոնի Հայերն ալ ունին իրենց ազգային վրայ, և թէ մեծամեծ զոհողութիւններ կընեն նախ մտաւորապէս վերականգնելու համար, որուն անխուսափելի հետևութիւնն է և քաղաքական վերակենդանութիւնը։ Ատ Տրապիզոնի մէջ ալ չկրցայ փոխել վերոյիշեալ համոզումս։ Ուրեմն ինչպէս շատ մը բաներու՝ այնպէս ալ ընթերցասիրութեան մէջ Տրապիզոնի Յոյները Հայերէն առաջ են։ Իսկ Թուրքերը Հայերէն ալ յետադէմ են, իրենց Բիւշտիյէ կոչուած վարժարանը նախանձելի կացութեան մը մէջ է։ Իսկ թագային վարժարանաց վիճակն՝ ինչպէս հոգ՝ նոյնպէս և այստեղ ողբալի է։ Քաղաքս եկած Թուրք լրագիրներուն դրեթէ ամենն ալ կառավարութեան պաշտօնէից կը վերաբերին, և ընթերցարան մ'ալ չունին։ Գոնէ Հայերը կրնան չարաթն երկու անգամ լրագիր կարդալ Հակահասունեան Հայոց Սրճարան—Ընթերցարանին մէջ։

Ամսոյս 17ին Հակահասունեանց առաջնորդ Մարկոս վարդապետը Հասունեան եպիսկոպոսին դիմեց մեղայ դոչելու և ի ծոց Պապականութեան ընդունելու համար։ Եպիսկոպոսը դայն տեղւոյս Քարուչիններուն ուղարկեց իւր ապաշխարութիւնը անդ կատարելու համար։ Արդէն քանի մը շաբաթ յառաջ իւր այդ դիտաւորութիւնը յայտներ էր՝ իւր ամսականին (երեք լիրա) անբաւականութիւնը յայտնելով, սակայն հասարակութիւնը խնդրեր էր իրմէ որ գոնէ մինչև Պոլսէն ուրիշ վարդապետ մը գալն սպասէ։ Այս անգամ Մարկոս վարդապետ՝ թերևս վախնալով որ քանի ուշանայ այնչափ կը ծանրանայ իւր պատիժը, այլ ևս չուզեց սպասել և գնաց վերութեան դուռը բացելու։

Ըստ իս, Մարկոս վարդապետ Քիւրէլեան պատրիարքէն աւելի պատուաւոր դտնուեցաւ այս մասին, վասն զի գոնէ առաջուց իմացուց իւր որոշումը և անոր չարժասիթը, այսինքն ամսականը։ Առաջին անգամը չէ որ այս մարդը դատանութիւն և եկեղեցի կը փոխէ· կ'երևայ թէ իւր համոզումն է այն դատանութենէն բլալ ուր աւելի կը կշտանայ իւր փորը։ Գալով Տէպայի թղթակցին այն ակնարկութեան թէ «մարգարիտն արդէն սկսած է տալ իւր պտուղները, վասն զի Պոլսոյ և Տրապիզոնի Հակահասունեաններէն շատերը Հասունեանի կողմը դարձան», բոլորովին ճիշդ չէ, գոնէ Տրապիզոնի համար։

Հետաքրքիր եղայ այդ մասին և ըստոյգ աղբիւրներէ իմացայ թէ միայն մէկ ընտանեաց հայր դարձած է ատ ցայսօր, այն ալ թերևս ի սէր ընտանեկան խաղաղութեան։ Իսկ թէ բոլորովին ապատասիրութեան և ազգասիրութեան արդի՞ւնք է արդեօք այդ հաստատումը-տութիւնը, այդ ալ ուրիշ հարցում մ'է, որուն բոլորովին ստորատական պատասխան չեմ կարող տալ։ Կ'երևայ թէ շահն ու կիրքն ալ ունին իրենց մասը։ Կը տեսնէք, խմբագրապետ Տէր, մինչդեռ մէկ կողմէն մեր մահու և կենաց խնդիրը կը յուզուի և մենք ամեն ժամանակէ աւելի պարտական էինք ամեն կրօնական խորութիւն մուծանելով մի սիրտ և մի հոգի աշխատիլ մեր վերակենդանութեան իրր ամփոփ և մի ժողովուրդ, քանի մը կրօնականաց փաստամոլութիւնը կը բերէ մեր մէջ ալ մարդկութեան արատ բերող վարդապետութիւն մը իւր ամեն հետևանքներով, և արդէն անգոր ժողովուրդը աւելի ևս կը տկարացնէ։

Ամսոյս 27ին կիւրակէ օրը սատակ ամպրոպ ըլլալով քաղաքս՝ քանի մ'անգամ փայլատակեց և կայծակը Բիւշտիէ վարժարանին ծխնելոյզէն իջնելով պայթեցաւ, պատին մի քանի տեղերը փլցուց և հարկաւ բոլոր աշակերտներն ահարեկ ըրաւ, սակայն բարեբաղդաբար կենաց վնաս չհասաւ։ Եթէ արդեօք անմահն Ֆրանքլինի գիւտը պիտի ընդհանրանայ մեր երկրին մէջ ալ, որպէս զի վերծ ըլլանք այդպիսի վտանգներէ։ Թերևս կոպատէք որ այս նամակաւ Ձեզ նկարագրեմ Սահմանադրութեան տարեդարձի հանդէսը, սակայն տեղի չունեցաւ։

Ձեր ընթերցողներուն մէն

ԹԷՐՃԷՄԱՆԸ ԷՖՔԵԱՐԻ ՑԵՏՍ ԿՈՉՈՒՄԸ

Դարաքէօյի ծանօթ դէպքին վերայ Թէրճէմանը Էֆքեար լրագրին իւր երէկուան և առջի տուր թիւերուն մէջ ըրած յայտարարութիւնները վերջ կուտան այն ամուլ վիճաբանութեան, որուն իւր սխալ հրատարակութիւնք տեղի տուեր էին։ Մեր յարգոյ պաշտօնակիցն՝ հակառակ իւր անցեալ ուրբաթ տուր թուով ըրած հրատարակութեանց, որովք Հայ բեռնակիրներն յանցաւոր և անոնց դասն անիրաւ կը ցուցնէր, և Մասիսն ալ անիրաւ դատի մը պաշտպան կը համարէր, հասարակաց կարծեաց դժգոհութենէն և իրեն եղած յանդիմանութիւններէ ստիպեալ՝ իւր այս երեքշաբթի տուր թուով կը խոստովանի թէ յանցանքը Քիւրտերուն քով էր և մինչև իսկ կը հրաւիրէ Հ. Բ. Էֆֆենտին որ այդ վայրագները վնասէ իւր չէնքէն։ Խնդիրն՝ ինչպէս յայտնի է, ասով կը վերջանար, որովհետև մեր միակ նպատակը Թէրճէմանը Էֆքեարի սխալներն հերքել, Հայ բեռնակրաց անմեղութիւնն հաստատել և յանցանքին Քիւրտ գործաւորաց քով լինելն ապացուցանել էր։ Մեք այդ նպատակին հասանք, և գոհ եմք որ Թէրճէմանը Էֆքեարի խմբագրութիւնն ալ վերջապէս ճշմարտութեան առջև խոնարհելով, վէճին առիթ տուող նիւթը մէջ տեղէն կը բառնայ։

Բայց մեր յարգոյ պաշտօնակիցը դիւրահասկանալի զգացմամբ մը մեզ նորէն պատասխան գրելու հարկ կը տեսնէ։ և երէկ նոր յօդուած մը կը հրատարակէ։ Թէրճէմանը Էֆքեար չկրնար հանդուրժել որ Մասիս զինքը Քիւրտերուն պաշտպան հռչակած լինի, և ի նպաստ ազգային դատին ցարդ իւր ըրած հրատարակութիւնները կը յիշէ։ Ընթերցողք դիւրաւ կը հասկընան թէ ասոնք ինդրէն դուրս խօսքեր են։ Մեք Թէրճէմանը Էֆքեարի ընդհանուր ընթացքը չեմք քննադատած։ բայց հաստատած եմք և կը հաստատեմք թէ ներկայ պարագային մէջ արդարասիրութեան և ազգասիրութեան հակառակ վարուեցաւ՝ մինչև իւր յետոյ կոչումն ըրած օրը։ Հետևաբար, Թէրճէմանը Էֆքեարի մեզ դէմ ըրած գանգատներն անտեղի են, ըստ որում մեր պաշտպանած դատին արդարութիւնն ինք ալ կը ճանչէ այժմ։

Թէրճէմանը Էֆքեար իւր երէկուան թուոյն մէջ աւելի յառաջ երթալով, ո՛չ միայն Քիւրդերուն արտաքսումն, այլ եթէ հնար է՝ Յոյն Գալֆային ալ ճանբուիլը կը խնդրէ Հ. Բ. Էֆֆենտիէն, որովհետև՝ ինչպէս կը յիշեն ընթերցողք՝ Յոյն Գալֆան ալ յանցանք ունէր այս գործին մէջ։ Հարկ չկայ ըսելու թէ Թէրճէմանը Էֆքեարի այս դարձը գոհացուցիչ է· և թէպէտ իւր երէկուան յօդուածին մէջ քանի մը մանր մունր ակնարկութիւններ կան մեզ դէմ, որոց կրնան արժանաւոր պատասխաններ տրուիլ, և որոց ի՛նչ տեսակ զգայման արդիւնք լինիլը դիւրին է դուշակել, սակայն վէճին բուն նիւթ եղող խնդրոյն սպառած լինիլը տեսնելով, ներողամիտ կը լինիմք իրեն և գոհութեամբ կը փակեմք ներկայ վիճաբանութիւնը, ցայտյայտնելով միայն որ Թէրճէմանը Էֆքեար մեզ դէմ ըրած սխալ դիտողութեամբք առիթ տուած էր այդ վիճաբանութեան, որուն կրնար առաջքն առնուլ՝ գործն 'ի սկզբանէ լաւ ստուգելով և այս շաբթու գրածներն անցեալ ուրբաթ օրը գրելով։ Բայց վերջապէս լաւ է անագան՝ քան երբէք։

ԻԼԱՆ

Զաթալճա վէ Զօրլու վէ ճիվաբընտա պուլունան ասքերի Շահանէ իչուն շուրութը՝ մուգարրէրէսի վէճճ իլէ միւպայեա օլունաճադ լահմին իճրա իտիլէն միւնաքասասընտա պէհէր գըյէսի ալթը ղրշ օթուզ փարայա օլարադ, Թալիպի էօհտէսինտէ օլուպ հազիրանը բուսմինին եէտինճի բէնճէնպիհ կիւնիւ միւնաքասասը պիլ իճրա գարարը գաթիսի վերիլէճէյինտէն, իթասընա Թալիպ օլանլարը եէվմի մէգիւրտէ Տարի Շուրայի ասքերիյէ կէլմէլէրի։

5 հազիրան 1879

Պապը Սէրասքէրի

Նիզամիյէ Էրզաք անպարընա շէրայիթը մալիւմէ իլէ միւպայեա օլունաճադ պէշ պին գըյէտէն օն պին գըյէյէ գատար բէթիմօ սապունուն պէհէր գըյէսի տէօրթ ղրշա օլարադ Թալիպի էօհտէսինտէ օլուպ հազիրանը բուսմինին եէտինճի բէնճէնպիհ կիւնիւ միւնաքասասը պիլ իճրա գարարը գաթիսի վերիլէճէյինտէն, իթասընա Թալիպ օլանլարը եէվմի մէգիւրտէ Տարի Շուրայի ասքերիյէ կէլմէլէրի։

5 հազիրան 1879

Պապը Սէրասքէրի

Advertisements referring to British or American Goods, etc., are exclusively received for this Paper at
EUG. MICOUD'S Foreign Advertising Agency 139—140, Fleet Street, London.

ԱՄԵՐԻԿԱՅԻ ՄԱՂԱԶԱՆ

Կ. Պոլիս Ղալաթիա Մինասեան և Ընկերաց Ամերիկայի Մաղազան կը ծախուի, աղնիւ ճերմակ կտաւներ, ու սեղանի ծածկոց և այլն, սեղանի արծաթած պատառաքաղ, դրգալ և այլն. կաղի Լամբաններ, սեղանի ճերմակ յախճապակէ սպասք Անդղիոյ տեսակէն, քարեօլաներ, փիքէ ծածկոց, քթանէ սավան և այլն, խոհանոցի վերաբերեալ անօթներ, կաբի գործիքներ, և ուրիշ անթիւ պիտանի վաճառք կը ծախուին չափաւոր գներով։

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ

ՄՏԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ

ԸՍՏ ԲԷԼԻՍԷԻ

(Մայրենի ոճ)

ՄԱՍՆ Ա.

Դէպոզիտ-Ինֆորմէյշընս Ի էակոց

Օրինակք և նիւթք բերանացի և գրաւոր հրահանգաց 5էն 8 տարեկան տղայոց համար.

Թ. Թէրզեան

Իւր տեսակին մէջ նոր բայց խիստ կարևոր գործ մ'է, որով մեծարգոյ հեղինակը մեր ազգային վարժարանաց մէկ մեծ պիտոյքը լցուցած է։ Ինչպէս անունն ալ կը յայտնէ, տղայոց միտքը խորհրդածութեան վարժեցնելու նպատակաւ շինուած գիրք մ'է, զոր մեր ազգային դաստիարակաց ուշադրութեան կը ներկայեմք։ Գործը 3 մասէ կը բաղկանայ, որք հետզհետէ պիտի հրատարակին։

Կը գտնուի ամեն Հայ գրավաճառաց քով և Բէբա Մ. Վէյսի և Մ. Պօտէնի դրատունները։ Դին 1 ֆրանք.

ԹՈՐՈՍ ԱՂԲԱՐ

ՀԱՑԱՍՏԱՆԻ ՃԱՄԲՈՐԴ

Գ. Վ. Մրոանչեանց

Մասն Առաջին

Կը վաճառուի Վ. Յ. Մարգսարեան դրատունը Մէրճան թիւ 57 և Եէնի ճամիի փողոց Ս. Ղուկասեանի խանութը և ամեն Հայ դրավաճառաց քով։ Դին կէս արծաթ Մէճիտ։

ՊԱՊԸ

ՀԷԼԼԻՆԱԿ

ՎԻՒԹՈՐ ՀԻՒԳՈ

Թարգմանեց Յ. Կ. Սըվաճեան

Դարուս մեծ հանճարին սոյն նոր գործին թարգմանութիւնը իրմիրէն հասած ըլլալով կը ծախուի Եէնի—ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղուկասեան դրատունը։

Դին մէկ քառորդ մէճիտ։

ԷՕԺԷՆ ՍԻՒ

ԴԻՒԱԲՆԱԿ ԲԼՈՒՐ

Թարգմանեց Ս. Ղուկասեան

«Թափառական Հրեայի» անուանի հեղինակին խիստ հետաքրքրաշարժ մէկ վէպն է, որուն թատրերգը քանի մը տարի առաջ կէտիկ բաշայի թատրոնին մէջ ներկայացուելով մեծ ընդունելութիւն գտաւ արգոյ հասարակութենէն։ Գործը երկու հատորէ կը բաղկանայ, որուն առաջինը իրմիրէն հասած ըլլալով կը ծախուի Եէնի ճամի Զիլինկիրլէր ճատտէսի թիւ 2 Ս. Ղուկասեան դրատունը։ Դին 2 ֆրանք։

ԽՄԲԱԳԻՐ—ՏՆՕՐԷՆ
Կ. Ս. ԻԹԻՃԵԱՆ

ՇԻՐՔԷԹԻ ԽԱՅՐԻԷԻ

ՇՈԳԵՆԱՒՆԵՐՈՒՆ ԵՐԹԵՒԵԿԻ ԺԱՄԵՐԸ

1879 ՅՈՒՆԻՍ 2 ՇԱԲԱԹ ՕՐԷՆ ՍԿՍԵԱԼ

ՄԻՆՉԵՒ ՅՈՒՆԻՍ 30

ԲՈՍՓՈՐԷՆ ԻՋՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Ժամ		Եւրոպական եղանակ	Թիւ
10	15	Եէնիմահալլէէն Մէզար. Պէօյիք. Թար. Եէնիք. Սթէն. Էմիրկ. Պօյաճ. Ր Հիսար, Պէպէք, (Աժան գնով)։	28
10	45	Ր Ա Գավագէն Եէնիմահ. Մէզ. Պէօյիւք, Թար, Եէնիք, Սթէն, Էմիրկ, Ր Հիսար, Պէպէք։	20
11	30	Եէնիմահ, Մէզար. Պէօյիւքտէրէ, Թարապիա, Եէնիք, Էմիրկ. Ր. Հիսար, Պէպէք։ (Ուրբ. օրերը ժամ 12ին)։	18
12	30	Եէնիմ. Մէզարպ. Պէօյիւքտ. Թարապիա, Եէնիք. Սթէնիա, Էմիրկ. Պօյաճ. Ր. Հիսար, Պէպէք։ (Բացի ուրբաթէ)։	21
1	15	Եէնիմահալլէէն Մէզարպ. Պէօյիւքտ. Թարապիա, Եէնիք. Էմիրկ. Ր. Հիսար։	32
2	15	Եէնիմ. Մէզար, Պէօյիւք. Թար. Եէնիք. Էմիրկ. Ր. Հիսար, Պէպէք, Արնավ. (Ուրբ. օրերը Գուր. Օրթաք. Պէշիկ)։	28
3	15	Ր. և Ա. Գավագ, Մէզար. Պէօյիւքտ. Թար. Եէնիք. Սթէն. Էմիրկ. Պօյաճ. Ր Հիսար, Պէպէք, Արնավ. Գուր. Օրթաք. Պէշիկ։	20
4	30	Եէնիմահ, Մէզար, Պէօյիւքտ, Թար, Եէնիք, Սթէն. Էմիրկ. Ր Հիսար, Պէպէք, Արնավ. Գուր, Օրթ, Պէշիկ։	21
5	30	Եէնիմահ. Մէզ. Պէօյիւքտ. Թար. Եէնիք. Էմիրկ. Ր. Հիսար, Պէպէք, Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկ։	12
6	15	Եէնիմահալլէէն Պէօյիւքտ. Թարապիա, Պէյքօզ, Եէնիքէօյ, Էմիրկ. Գանլըճա, Ր. և Ա. Հիսար, Գանտիլլի, Արնավ. Զէնկ. Պէյլէր. Օրթաքէօյ, Գուզկ. Պէշիկթաշ, Իսկիւտար։	4
8		Ր. և Ա. Գավագէն Եէնիմահ. Մէզար. Պէօյիւք. Թարապիա, Պէյքօզ, Եէնիք. Էմիրկէն, Պօյաճ, Ր. Հիսար, Պէպէք, Արնավ. Գուրուչ. Օրթաքէօյ, Պէշիկթաշ։	32
10	15	Մէզարպուրնուէն Պէօյիւքտ. Թարապիա, Եէնիքէօյ, Էմիրկէն, Ր. Հիսար, Արնավ. Օրթաքէօյ, Պէշիկթաշ։	23

ԱՐՆԱՎՈՒՏ ԳԻՇԵՐՆ

11		Արնավ, Գուր, Օրթաք, Պէշիկ։ (Աժան գնով)	25
11	30	Արնավուտքէօյ, Գուրուչ. Օրթաք. Պէշիկ.	2
12		Պէպէք, Արնավ, Գուրուչ. Օրթաք. Պէշիկ, Գապաթ։	23
12	45	Արնավ. Գուրուչ. Օրթաք. Պէշիկթաշ, Գապաթաշ։	25
1	30	Արնավ. Գուր. Օրթաք. Պէշիկ. Գապաթաշ։	2
2	15	Արնավ. Գուր. Օրթաք. Պէշիկ. Գապաթաշ։	18
3	30	Արնավ. Գուրուչ. Օրթաք. Գուզկ, Պէշիկ. (Բացի ուրբաթէ)։	17
8	30	Արնավ. Գուր, Օրթ, Պէշ։ (Բացի ուրբաթէ)։	2
10		Արնավ, Գուր, Գապաթաշ։	12
10	45	Արնավուտքէօյէն ուղղակի կամուրջ։	2

ԱՌԱՒՕՏՅԱՆ ԵՂԱՆԱԿ

10	15	Պէօյիւքտ. Պէյքօզ, Բաշպ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկ. Պէյլ. Գուզկ. (Աժան գնով)։	12
11		Պէյքօզ, Բաշպ. Ր. փաշա մահ. Գանլըճա, Ա. Հիսար, Գանտիլլի, Վանիք. Զէնկէքէօյ, Պէյլ, Գուզկ։	19
11		Արնավ. Վանիքէօյ, Զէնկէլ. Պէյլէր. Գուզկ. Գապ։	4
12		Պէօյիւքտ. Թար. Պէյքօզ, Բաշպ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկէլ. Պէյլէր. Գուզկ. (Ուրբաթ օրերը ժամ 12 1/2ին)։	17
1	30	Պէօյիւքտ. Թար. Պէյքօզ, Բաշպ. Ր փ. մահ, Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանրք Զէնկ. Պէյլ. Գուզկ. Գապ։ (Բացի ուրբաթէ)։	34
3	15	Պէյքօզ, Բաշպ. Ր. փ մահ. Գանլ. Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկ. Պէյլ. Գապաթաշ։	19
4	15	Գանլըճա, Ա. Հիսար, Գանտ, Վանիքէօյ, Զէնկ, Պէյլ. Գուզկ. Իսկիւտար։ (Բացի ուրբաթէ)։	23
8	45	Պէօյիքտ. Պէյքօզ, Բաշպ. Գանլըճա, Ա. Հիսար, Գանտ. Վանիք. Զէնկէլ. Պէյլէրպէյ, Գուզկ. Իսկ. (Ուրբաթ օրերը Րիֆաթ փաշա մահալլէսի)։	25

ԿԱՄՈՒՐՋԷՆ ԵԼՆՈՂ ՇՈԳԵՆԱՆԻԵՐԸ

Ժամ		Եւրոպական եղանակ	Թիւ
12	15	Գապ. Իսկ. Պէշիկ. Գուզկ. Օրթ. Պէյլ. Զէնկ. Արնավ. Գանտ. Ա. և Ր. Հիսար, Գանլը Էմիրկէն, Եէնիք. Պէյքօզ, Թարապ. Պէօյիւք. Եէնիմահ։	4
12	30	Պէշիքթ. Օրթաք. Արնավ. Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիք. Թարապ. Պէօյիւքտ. Եէնիմահ։	28
1	30	Պէշիկ. Օրթաք. Արնավուտ. Ր. Հիսար Պօյաճ. Եէնիք. Թարապ. Պէօյիւք Մէզարպ. Ր. և Ա. Գավագ։	20
2	30	Գապ, Պէշիկ. Օրթաք. Գուր. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկ. Սթէն. Եէնիք. Թար. Պէօյիւք. Մէզար Եէնիմ	21
3	45	Պէշիկթաշ Օրթաք, Արնավուտք, Ր, Հիսար, Էմիրկ. Եէնիք, Թարապ, Պէօյիւքտ, Մէզարպ, Եէնիմ։	12
5		Պէշիկ. Օրթաք. Արնավ Պէպէք Ր. Հիսար, Պօյաճ. Էմիրկ. Եէնիք. Պէյքօզ, Թարապ. Պէօյիւք. Մէզարպ Ր. և Ա. Գավագ։	32
6	15	Իսկ. Պէշիկ. Գուզկ. Օրթաք. Պէյլ. Զէնկ. Արնավ. Գանտ. Ր. Հիսար, Պօյաճ. Եէնիք թար. Պէօյիք։	23
8		Պէշիկթաշ, Օրթաք. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Էմիրկ. Եէնիք. Թարապ. Պէօյիւքտ. Ա Էզարպուրնու։	23
9	15	Պէպէք, Ր. Հիսար, Պօյաճ. Սթէն. Եէնիք. Թարապ. Պէօյիքտ. Մէզարպ. Եէնիմահ։	28
10		Ր. Հիսար, Էմիրկ. Սթէն. Եէնիք. Թարապ. Պէօյիք Մէզար. Եէնիմահ։	21
10	30	Օրթաք. Արնավ. Պէպէք, Ր. Հիսար, Պօյաճ. Սթէն, Եէնիք. Թարապ. Պէօյիւքտ. Մէզարպ. Եէնիմ։ (Ուրբաթ օրերը Պէշիկթաշ, Գուրուչ։)	18
10	45	Պէշիկ, Գուզկ. Գուր. Պէպէք, Ր. Հիսար Պօյաճ. Էմիրկ. Եէնիք. Թար. Պէօյիւք. Մէզ. Եէնիմ։ (Բացի ուրբաթէ)	20
11	15	Պէպէք, Ր. Հիսար, Պօյաճ. Էմիրկ. Սթէն Եէնիքէօյ, Թարապիա, Պէօյիւքտ. Մէզարպ. Եէնիմահալլէ։ (Աժան գնով)։	32

ԱՐՆԱՎՈՒՏ ԳԻՇԵՐ

12	Ուղղակի Արնավուտքէօյ։	25
12 30	» »	2
1 30	» »	18
3	» » (Բացի ուրբաթէ)։	17
7 45	Պէշիկ, Օրթ, Գուր, Արնավ։ » »	2
9 15	Գապ. Պէշիկ. Օրթաք. Գուր. Արնավ	12
10	Գապաթաշ, Պէշիկ, Օրթաք, Գուրուչ. Արնավ.	2
11 15	Գապաթ. Պէշիկ. Օրթաք. Գուրուչ. Արնավ։	25
11 40	Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավ։	2
12	Պէշիկթաշ, Օրթաք. Գուրուչ. Արնավուտ. Պէպէք։ (Բացի Պէպէքէն աժան գնով)։	23

ԱՌՕՏՅԱՆ ԵՂԱՆԱԿ

1	30	Իսկ. Գուզ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշպ. Պէյքօզ։	19
3		Իսկ, Գուզկ, Պէյլէրպ. Զէնկ, Վանիք, Գանտ, Ա Հիսար, Գանլըճա։ (Ուրբաթ օրերը Էմիրկ, Ր. փաշա մահ. Բաշպ, Պէյքօզ։)	23
9		Գուզկ, Պէյլէր, Զէնկէլ, Վանիք. Գանտ, Ա Հիսար, Գանլմ, Բաշպ, Պէյքօզ, Թարապ, Պէօյիւքտ. (Բացի ուրբաթէ)։	19
9	45	Գուզկ. Պէյլէրպ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշպ. Պէյքօզ, Մէզարպ. Ր. և Ա. Գավագ։	17
10	30	Գապաթ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Զուլուգլու, Բաշ. Պէյքօզ, Թարապ. Պէօյիւքտ. (Ուրբաթ օրերը Գուզկ.)	19
11	15	Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Գանտ. Ա. Հիսար, Գանլ. Բաշպ. Պէյքօզ։ (Աժան գնով)։	12
11	30	Գապաթ. Գուզկ. Պէյլ. Զէնկ. Վանիք. Արնավ.	22

Լրագիրս ամեն օր կը հրատարակուի բաց 'ի կիրակի և տօն օրերէ։

Բաժանորդագրութեան տեղն է Ղալաթիա Սանտըգճըլար ճատտէսի թիւ 198, Նօրօ խան Մասիսի խմբագրատունը։ Իսկ գաւառաց մէջ հետևեալ հոդաբարձուաց դրասենեակները.

ԶՄԻՒՌՆԻԱ. Ստեփան էֆ. Տէտէեան.
ՆԻԿՈՄԻԴԻԱ. Խոսրով » Էսկիճեան.
ՊՐՈՒՍԱ. Ստեփան էֆ. Թանկէրեան.
ՌՈՏՈՍԹՕ. Ա.բժ. Տ. Արիստակէս աւագ քահանայ Ֆէչլեան.
ԱԴՐԻԱՆՈՒՊՕԼԻՍ.
ՍԱՄՍՈՒՆ.
ՏՐԱՊԻԶՈՆ. Ս. Էթմէքճեան էֆէնտի.
ԱՄԱՍԻԱ.
ՍԵԲԱՍՏԻԱ. Նազարէթ էֆ. Յ. Խաթմպօլլեանց.
ԵՒԴՈԿԻԱ.
ՓԱՐԲԵՐԴ և ՏԷՐՍԻՄ. Կիրակոս էֆ. Ս. Ղազանճեան.
ԵՐԶՆԿԱ. Թադէոս էֆ. Բագրատունի.
ԿԱՐԻՆ. Կարապետ » Զաքարեան.
ՄՈՒՇ. Մկրտիչ » Փօթիկեան.
ՎԱՆ.
ԲԵՐԻԱ. Սեդրակ » Խարաճեան.
ՏԻԳՐԱՆԱԿԵՐՏ. Թէոֆան էֆ. Թաշճեան.
ԵԴԵՍԻԱ. Գէորգ էֆ. Ոսկերչեան.
ՄԱՐԱՇ.
ՖՕՐԵՇԱՆ. Ֆէրհատ աղա Ս. Ֆէրհատեան.
ՏՓԽԻՍ. Պ. Նիկողայոս Տ. Ղևոնդեան.
ԿԱԼԿԱԹԱ. Պետրոս աղա Հէքիմեան։

ԻՄՍԿԻՍՏԱՐ ԲԱՆՈՂ ՇՈԳԵՆԱՒՆԵՐԸ

Իսկէտարէն Կամարջ. Ժամ	Ժամ	Կամարջէն Իսկէտար. Ժամ	Ժամ
11 Աժան գին		11 30	
11 30	6 15	11 45	7
12	7	12 15	8
12 30	8 15	12 45	8 30
1	8 35 Պէշիքթաշ	1 15	9
1 25	9 15	1 40	9 30
2	9 35	2 15	9 50
2 30	10	2 45	10 10
2 55	10 25	3 10	10 35
3 30	10 45	3 45	11
4	11 5	4 15	11 20
4 30	11 25	4 40	11 40
5 5	11 40	5 15 Պէքթ.	11 50
5 45	12	6 10	12 5 Աժան գին

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Իսկէտարէն Կամարջ. Ժամ	Ժամ	Կամարջէն Իսկէտար. Ժամ	Ժամ
11 30	5 25	11 30	5 25 Պէքթ.
12	6	12	6
12 30	6 35	12 30	6 25
1	8	1	8
1 30	8 40 Պէշիքթաշ	1 30	8 45
2	9 20	2	9 20
2 30	10	2 30	10
3 5	10 30	3 5	10 30
3 45	11	3 45	11 5
4 30	11 30	4 30	11 35
5	12	5	12 5